ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգարժան բուժաշխատողներ, Սևան համայնքի առողջապահական բնագավառի ներկայացուցիչներ
Ընդունեք շնորհավորանքներս ձեր մասնագիտական տոնի՝ բուժաշխատողի օրվա առթիվ:
Հունիսի 21-ին նշում ենք բուժաշխատողի օրը, որը միավորում է սպիտակ խալաթ կրող մարդկանց, որոնց համար աշխատանքը, նախ և առաջ, առաքելություն է:
Ձեր աշխատանքի իրական գնահատական տվողներն այն մարդիկ են, որոնք ձեր հոգատար ձեռքերի, մասնագիտական ու մարդկային որակների, հոգածության, նվիրումի շնորհիվ կարողացել են վերադառնալ իրենց բնականոն կյանքին, ավելին՝ դուք նպաստել ու նպաստում եք ձեր բուժառուների կյանքի որակի բարելավմանը:
Կյանքեր փրկող ու կյանքեր նվիրող, հույս ու ջերմություն սփռող մարդիկ բոլոր ժամանակներում իրենց բարձրության վրա են և յուրաքանչյուր օր մարդասիրության լավագույն դասեր են տալիս:
Ձեր գիտելիքների, մասնագիտական կարողությունների, մարդկային հատկանիշների շնորհիվ շնորհակալ և երախտագետ հայացքների ու խոսքերի մեծ պաշար եք կուտակել, որոնք օգնելու են բուժառուներին բարդ, հաճախ անլուծելի թվացող խնդիրները հաղթահարել ու հաղթել հիվանդությանը:
Առանձնակի շնորհավորում եմ Սևան համայնքի բուժաշխատողներին, ողջունում եմ մեր բազմավաստակ բժիշկներին,
բուժաշխատողներին, որոնք գրել են օրինակելի կենսագրություն, ողջունում են այս ոլորտի սկսնակներին, որոնք անդամագրվել են բուժաշխատողների մեծ համայնքին ու շարունակելու են լավագույն ավանդույթները:
Սիրելի բուժաշխատողներ
Օրվա առթիվ ընդունեք լավագույն բարեմաղթանքներս, եղեք առողջ, կենսունակ, մաղթում եմ ձեզ արևշատություն, երջանկություն, մասնագիտական վերելք, բեղմնավոր աշխատանք, արժանապատիվ կյանք, խաղաղություն և բարեկեցություն՝ ձեզ և ձեր ընտանիքներին: